

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխվկեմտ, Օհայո



**ST. GREGORY OF NAREK
ARMENIAN CHURCH**

**REV. FR. DIRAN PAPA ZIAN
PASTOR**

Area Code 216—Tel. 381-6590

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

4 Մարտ, 1974

Գեր . Տ . Թորգոմ Արք . Մանուկեան ,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի ,
Որ ի նիւ Եորկ ,

Սիրելի Առաջնորդ Սրբազան Հայր ,
Զեր հեռաձայնային խօսակցութենէն ամիշապէս վերջ , անցեալ շաբաթ օրը ,
23 Փետրուարին , որմէ վերջ շատ չուշացաւ նաեւ ձեր 22 Փետրուար թուակիրը
(Հայերէնով) , եւ որմէ առաջ ստացեր էինք արդէն Զեր-14 Փետրուար թուա-
կիրը (Անգլերէնով) եւ որու պատասխանելու առիթը չէինք ունեցած տակաւին ,
մինչ ստացած եղանք ձեր վերոյիշեալ զոյգ հաղորդակցութիւնները (բերա-
նացի եւ գրաւոր) , ձեր հրահանգին համաձայն ուրեմն , նամակ գրուեցաւ մեր
ծիականներուն՝ հրաւիրելով զիրենք մասնաւոր ժողովի մը , որպէս զի Ծիական
Խորհուրդի , ինչպէս նաեւ Ընդհանրական եւ Հաշուեքննիչ Յանձնախումբերու վե-
րըստին ընտրութիւնը կատարէինք , այս անգամ գաղտնի քուէով , համաձայն մեր
Վանոնագրին 21-րդ Յօդուածին , այս կերպով սրբագրելով այն սխալը որ պա-
տահած էր 1 Փետրուարին կայացած Եկեղեցւոյ Տնօրէկան Ծիական Ժողովին մէջ ,
ըստ որում փոխանակ գաղտնի քուէարկութեան , ձեռամբարձ կատարած էինք ըն-
տրութիւնը վերոյիշեալ մարմիններուն :

Արդ , այս նոր ժողովը տեղի ունեցաւ երեկ , Կիրակի , 3 Մարտին , Եկեղեց-
ւոյ արարողութիւններէն ամիշապէս վերջ , մեր նախագահութեամբ եւ 25 ծիա-
կաններու մասնակցութեամբ : Յետ նախապատրաստական աշխատանքներու , ինչպէս
Բացման աղօթք , ներկայութեան ստուգում եւ բացատրութիւն ժողովի բնոյթին ,
ժողովին ընթացք տրուեցաւ Օրակարգի վրայ ունենալով միակ հարց մը , այն է
ընտրութիւնը Ծիական Խորհուրդի , Ընտրական Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ
Յանձնախումբի : Նկատի առնելով ներկայութեամբ անբաւարար թիւը ստիպուած
եղանք կիրարկել Վանոնագրութեան 17-րդ յօդուածը :

Ընտրութեան արդիւնքը այսու ձեզի կը ներկայացնենք ըստ հետեւեալին :

Ծիական Խորհուրդ

| | | | |
|---------|-------------|----|------|
| Նուպար | Ապտալեան | 25 | քուէ |
| Գէորգ | Արսլանեան | 25 | ,, |
| Նազարէթ | Միրաքեան | 25 | ,, |
| Րաֆֆի | Զաքըրեան | 25 | ,, |
| Զրոս | Պաղտասարեան | 25 | ,, |
| Գրիգոր | Երանեան | 23 | ,, |

Ընտրական Յանձնախումբ

| | | | |
|------|-------------|----|------|
| Փօլ | Արսլանեան | 25 | քուէ |
| Միքի | Պաղտասարեան | 24 | ,, |
| Ալիս | Պաղտասարեան | 24 | ,, |

(Ծարուհակութիւն)

Հաշուեցնելիչ Յանձնախումբ

| | | |
|------------------|----|------|
| Ռիչարտ Արսլանեան | 25 | քուէ |
| Ճորճ Սագեան | 25 | ,, |
| Կրէյս Արսլանեան | 25 | ,, |

Ներփակած ենք օրինակ մը ծխականներու գացած Մամակէն, ինչպէս նաեւ քուէաթուղթ մը, իբրեւ նմոյշ, որու վրայ արձանագրուած կը գտնէք իւրաքանչիւր անձի ստացած քուէներու թիւը: Աւելցնենք որ թէեւ սոյն հրաւէր նամակին վրայ կը պակսի թուականը, սակայն անոնք Շաբաթ օրը իսկ խմբագրութեան եւ Ղրկութեան մեր ծխականներուն, Տըրսթ Բլաս Մէյլ, Ռով, որով մեր կանոնագրութեան 16-րդ յօդուածը յարգուած եղաւ, քանի որ ժողովէն շաբաթ մը առաջ սոյն հրաւիրագիրը ձեռքն էր մեր ծխականներուն:

Կը յուսանք որ ներկայ ընտրութիւնը օրինաւոր կը համարուի եւ շուտափոյթ կուղարկէք վաւերացումը:

Իսկ գալով ուրիշ քանի մը մանր կէտերու, զորս մատնանշած էիք ձեր զոյգ նամակներուն մէջ, այսու, քանի պատեհառիթն է, կը փութամ քանի մը բառով բացատրութիւն տալ, ինչպէս որ արդէն դուք ալ պահանջեր էք որ տրուին այդ բացատրութիւնները:

Նախ կանդրադառնանք ձեր փետր. 14 թուակրով արծաթթուած կէտերուն, յարգելով ժամանակագրական կարգը, եւ հետեւեալ բացատրութիւնները խոնարհաբար կը ներկայացնենք Ձերդ Սրբազնութեան նկատազման:

ա.)- Նախ թուականի սխալ մը կը մատնանշէք, ըսելով թէ մեր փետր. 16 թուակիրը որ ներփակուած էր պահարանի մը մէջ ուր ներփակուած էին նաեւ մեր Տարեկան Ծխական Ժողովին վերաբերող կարգ մը այլ Տեղեկագիրներ, ստացեր էք փետրուար 13-ին, աւելցնելով որ կ'ապաստէք նաեւ մեր Տարեկան Ծխական Ժողովի Ատենագրութեան եւս, քանի որ միայն այդ էր որ կը պակսէր սոյն պահարանին մէջ, եւ մենք չէինք ուզած ապասել մինչեւ անոր աւարտումը, եւ ժամանակ շահելու համար Ղրկած էինք ձեռքերնիս ունեցածը, Ատենագրութեան ուղարկումն ալ թողլով աւելի վերջը, մինչեւ անոր պատրաստութիւնը:

Հետապնդումներէս պարզութեամբ ու ձեր ակնարկած վերեւի պահարանին պարունակութեան մաս կը կազմեն զոյգ նամակներ, մէկով քուէարկութեան արդիւնքը ձեզի տեղեկացնելով եւ միւսով ալ Ծխական Խորհուրդի նոր դիւանի ընտրութիւնը: Խնդրոյ առարկայ սոյն նամակներէն առաջինը 6 փետր. թուակիրը ունի, իսկ երկրորդը անուշադիր վրէպով մը եղած է 16 փետր. փոխանակ ըլլալու 6 փետր. քանի որ սոյն օրը գրուած նամակներ են անոնք: Իսկ պահարանին ուշացումը (քանի որ կ'ըսէք թէ ձեր ձեռքը հասած է 13 փետր.ին) կը բացատրուի անով որ, յիշեալ զոյգ նամակներու գրութեան վերջ, անոնց ստորագրութեան հարցը, ինչպէս նաեւ միւս Տեղեկագիրներու ստորագրութեան հարցը ժամանակ առած է, նախ քան պահարանին նամակատուի յանձնումը, քանի որ երեք հոգիներու ստորագրութիւնը ապահովելու հարցը կար:

բ.)- Ծարուհակուող տողերուն մէջ կը մատնանշէք թէ միջ ընտրութեանց եղանակը անտեսած է մեր կանոնագրութեան 21-րդ յօդուածը, քանի որ քուէարկութիւնը կատարուելու փոխանակ կատարուելու գաղտնի քուէով, կատարուած է ձեռամբարձ, այսինքն բաց քուէով:

(Ծարուենակութիւն .)

Կընդունինք որ բաց քուէով կատարուած ընտրութեամբ զանցառու գըտ-
 նըւած ենք օրէնքին տառին որոշակի գործադրման, բայց այս թերացումն
 ալ բացատրելի է անոք որ ընտրելի թեկնածուներուն թիւը աւելի չէ եղած
 քան ինչ որ ընտրելիներու թիւը կը պահանջէր, այլապէս ըստ օրինի երկ-
 պատիկ ցանկ պէտք էր ներկայացուէր, եւ քանի որ 6 հոգիի պէտք կար Սը-
 խական Խորհուրդի վրայ եւ ներկայացուած թեկնածուներու թիւն ալ 6 հատ
 էր միայն, ինչպէս նաեւ ընտրական եւ հաշուեքննիչ Յանձնախումբերու
 պարագային եւս նոյն կացութիւնը պատահելու, այսինքն 3 թեկնածուներու
 դէմ 3 ընտրելիներ ունենալով միայն, ուստի աւելորդ համարեցինք գոց
 քուէով ընտրութիւնը, խորհելով որ փոքրիկ գաղութներու պարագային ո-
 ղոնք առանձնայատուկ պայմաններով կը ներկայանան շատ յաճախ, նման թե-
 րացումներ երբեմն ներելի են, ~~եթէ անշուշտ~~ եւ ինչպէս կ'ըսեն ,, հարկ
 լուծանէ գորէնս ,, եթէ անշուշտ այս թերացումներով անտեսուած օրէնք-
 ները սկզբունքային մեծ հարց մը չեն ոտնակոխեր:

գ.)- Կը մատնաշնէք նաեւ որ Սխական Խորհուրդի ղիւանի ընտրութիւնը
 կատարուած է նախ քան ընտրութեան վաւերացումը, եւ ուրիշմն լուսաբանու-
 թիւն կը պահանջէք նախ քան վաւերացման համար որեւէ քայլ առնելնիդ:

Վերելի կէտի վերաբերմամբ թոյլ տուէք ըսել որ թէեւ ճիշդ է որ Դի-
 ւանի ընտրութիւն կայացած է 4 փետր.ին, բայց նոր ղիւանը պաշտօնի չէ
 ձեռնարկած որքան ատեն որ ~~պաշտօնի չէ վաւերացում~~ վաւերացում չէ ստաց-
 ուած: Այդ պարզապէսեղած է գործնականութեան սիրոյն եւ այդչափ: Հին
 Սխական Խորհուրդը իր ղիւանով կը շարունակէ ի գօրու մնալ եւ ոչինչ
 փոխուած է Սխական Խորհուրդի կազմէն ներս:

դ.)- Ձեր նոյն նամակին վերջին պարբերութեամբ մեր ուշադրութիւնը
 հրաւիրած էք նաեւ կատարուած զարտուղի մէկ կարգադրութեան մը վրայ,
 ըստ որում պատեհութիւն տուած էինք քարոզելու Ս. ներսէս Աստուածաբա-
 նական Դպրոցի ուսանողուհիներէն միոյն, եկեղեցւոյս մէջ: Ճիշդ է որ
 նորութիւն մըն էր մեր կողմէ պատեհութիւն տրուելը քարոզխօսութեան՝
 իգական սեռի պատկանող անդամի մը: Դուք իրաւամբ կ'աւելցնէք որ նման
 տնօրինութիւններ՝ որոնք չեն նախատեսուած մեր կանոններուն մէջ եւ կամ
 աւանդութիւն չեն մեր եկեղեցւոյն համար, կը պատկանին միայն Առաջնոր-
 դին: Եթէ թոյլ տաք մեզի, ձեր յարուցած հարցին մասին մեր տալիք բա-
 ցատրութիւնը այն պիտի ըլլայ որ սոյն պատեհութիւնը տրուած է Աստուա-
 ծաբանական ձեւարանի ուսանողուհիի մը, որ կը կարծենք թէ հարկ եղած
 պատրաստութիւնը պէտք է ունեցած ըլլար: Մեր կարծիքը այն էր որ Աստ-
 ուածաբանական ուսանողներ ունենալու են հարկ եղած պատրաստութիւնը,
 եւ իրենց տրուելու է պատեհութիւն քարոզխօսութեան առ ի վարժութիւն
 եւ քաջալերութիւն: Այս պարագային այնպէս պատահած է որ այդ անձը
 ըլլար իգական սեռի պատկանող անձ մը, եւ թէ այնպէս պատահած է որ
 առաջին անգամ ըլլալով իգական սեռի պատկանող անձ մը պատեհութիւն
 ունեցած ըլլայ քարոզխօսութեան: Մեր թերացումը թերեւս այն եղած է
 որ անգիտակ եղած ենք որ այս օրինակ պաթագայի մը թեմին Առաջնորդին
 արտօնութիւնը առնելու անհրաժեշտութիւնը կը ներկայանար: Այժմէն
 կ'ուզէինք գիտնալ թէ ապագային նմանօրինակ պարագաներու հարկ է որ
 մենք թեմին Առաջնորդին արտօնութիւնը ունենանք, քի թէ արդեօք իւ-
 րաքանչիւր պարագայի նոր արտօնութեան մը պէտք կայ թէ իսկ նոյն անձը
 ըլլայ խնդրոյ առարկան...:

Իսկ այժմ գանք ձեր երկրորդ նամակով արծարծուած կէտերուն, այն
 նամակին որ կը կրէ փետրուար 22, 1974 թուականը եւ ունի 24275 թուա-
 համարը:

Հոր
 ազնու
 պատգամ
 առջնորդի
 Կերթ Է:
 Իմաստ ստե
 ինքզին
 առաջնորդի
 Կերթ Է:
 Իմաստ ստե

Ինքզին ինքզին առաջնորդի Կերթ Է:

(Թարուհակութիւն)

ե.)- Կախ կը խօսիք փետրուար 2, 1974 թուակրով նամակի մը մասին որով կարգահարցերու մասին որպէս թէ լուսաբանութիւններ էք պահանջած մեզմէ, եւ ի փոխարէն ղրկուած գտած էք Միական ժողովի Ատենագրութիւնը միայն: Այդ Ատենագրութիւնը ղրկուած է անկախաբար ձեռնամակէն, ամի- շապէս որ պատրաստ եղած է:

Մենք չենք ստացած փետր. 2, 1974 թուակրով որեւէ նամակ, բացի վե- րոյի շեալ գոյգ նամակներէն, որոնցմէ միայն արդէն անդրադարձանք, իսկ միւսին ալ այժմ հաւաստիկ կ'անդրադառնանք: Մենք այնպէս կը կարծենք թէ ձեր ակնարկած նամակը վերոյի շեալ պատասխանուած փետր. 14 թուա- կիրը ըլլալու է, քանի որ մեր Միական ժողովը տեղի ունեցած է 1 փետր.ին, եւ հետեւաբար 2 փետր.ին կարելի է մեզմէ ժողովին վերաբերմամբ լու- սաբանութիւններ պահանջած ըլլաք, երբ տակաւին չէք ստացած ժողովին վե- րաբերմամբ մանրամասնութիւններ:

զ.)- Սոյն ձեր փետր. 22 նամակով դարձեալ անդրադարձած էք մեր ըն- տրութեանց հակաօրինական բնոյթին, մատնանշելով մեր Կանոնագրութեան 21-րդ Յօդուածը, ըստ որում ընտրութիւնը կը կառարուի գոց քուէով կամ գաղտնի քուէարկութեամբ:

Սոյն նամակով հրահանգած էք որ երկրորդ ժողովի մը հրաւիրուին եկե- ղեցւոյ անդամները եւ կանոնագրութեան տրամադրութեան համաձայն կատար- ուին նոր ընտրութիւններ, ինչ որ ըրած ենք արդէն, եւ ուզած էք որ փութով ձեզի ղրկենք արդիւնքը նոր ընտրութեանց առ ի վաւերացում, ինչ որ կ'ընենք արդէն ներկայիս:

է.)- Դարձեալ, յիշեցուցած էք որ մեծամասնութիւն չի գոյանալու պարագային, գործածենք 17-րդ յօդուածի տրամադրութիւնները, ինչ որ պարտաւորութեանց ընել, եւ արդէն այդ մասին անդրադարձած եղանք մեր նամակի սկզբնաւորութեան, երբ տեղեկութիւն կուտայինք ձեզի մեր նոր ընտրութեան մասին:

ը.)- Իսկ վերջին պարբերութեամբ մը մեր աւշադրութեան կը յանձնէք քուէարկուներու թիւի պարագայ մը, ըստ որում Տեղեկագիրներու մէջ քուէարկուներու թիւը յիշուած է որպէս 37, իսկ Ատենագրութեան մէջ որպէս 39:

Ասոր ալ բացատրութիւնը այն է որ ժողովի սկզբնաւորութեան երբ ներկաներու ստուգումը կը կատարուէր ունէինք միայն 37 հոգի որոնք քուէարկութեան մասնակցեցան, իսկ վերջէն 2 հոգի ալ եկան եւ ներկա- ներուն թիւը հասցիւցին 39-ի, եւ որով վերջնական թիւն է որ մաս կազ- մած է Ատենագրութեան:

Կը յուսանք որ գոհացուցած եղանք, ձեր յարուցած բոլոր կէտերուն պատասխանելով:

Աղօթելով ձեր բարի գործոց յաջողութեան եւ Առաջնորդարանի գործե- րուն առաւել արդիւնաւորութեան,

Մնամք շնորհակալ Ձեր Ս. Աշոյն,
Խոնարհ Աղօթակից՝

S. Տիրան Զհնյ. Փափազեան, Հովիւ